տիտղոսն էր կրում: Ծերութեան հասակում Որսորդը թողեց այդ պաշտօնը եւ նրա փոխարէն կատարում էր նրա փեսան՝ Ֆարհատը:

Որսորդը վերջը որդեգրեց Ֆարհատին եւ ամուսնացրեց իր դստեր՝ Մարօի հետ: Ֆարհատի մանկութեան ընկերուհին այժմ նրա կինն էր:

Այսօր Որսորդի տան դռան հանդէպ, հրապարակի վրայ, կանգնեցրած է նրա ձիաների երամակը: Ձիաների ամէն մէկի ետեւից ձախ ազդրի վրայ դրած է Որսորդի դրոշմը՝ հայոց ՈՅ տառը: Նժոյգները խրխնջում են, դափր են հատանում, փոշի են բարձրացնում, եւ ձիապանները հազիւ կարողանում են զսպել նրանց, Ֆարհատը սակարկութիւն է անում պարսկաստանցի վաճառականների հետ, որ եկել են նրանից ձիաներ գնելու: Նրա կինը, գեղեցիկ Մարօն, երեխան գրկում, կանգնած է լուսամուտի մօտ, այնտեղից նայում է ամուսնու վրայ: Ծերունի Որսորդը, նստած տան դռան մօտ, նոյնպէս հիացած նայում է, թէ ինչպէ՛ս Ֆարհատը խօսում է վաճառականների հետ, ինչպէ՛ս բացատրում է նժոյգների իւրաքանչիւրի արժանաւորութիւնը: Վիթխարի Մըհեն, Որսորդի տան հին հաւատարիմը, այժմ ալեւորած մազերով, տակաւին չէ կորցրել իր վաղեմի հերքուլեսեան ուժը: Նա բարկացած է անհանգիստ նժոյգների վրայ: «ի՞նչ սատանայ մտաւ ձեր պինչրե... ասում է նա ձիաներին եւ պարանը ձգում է մի տրմուզ քուռակի պարանոցը, որ շատ է զայրացնում նրան: Մըհեն այժմ Որսորդի ձիապանների գլխաւորն էր, այդ պաշտօնը բաւական հպարտացնում էր նրան: Ֆարհատը վերջացրեց սակարկութիւնը եւ, ոսկիների քսակը ձեռին, ուրախ եւ գոհ տուն մտաւ:

— Քանի՞ հատ գնեցին, — հարցրեց Որսորդը:

— Հինգ հատ, — պատասխանեց Ֆարհատը:

— Այդքան խօսակցութիւն հի՞նգ ձիու համար:

— Նրանք մեր ձիաները շատ թանկ են գտնում:

— Լաւ բանը լաւ գին կունենայ, — նկատեց Որսորդը: — Թող գնան ամբողջ գաւառը ման գան, եթէ մեր ձիաների հատը գտնելու լինեն, ես ձրի կը տամ:

Ներս մտաւ Մըհէն:

— Առ, Մըհէ, — ասաց Ֆաբհատը, մեկնելով երկու հատ ոսկի: — Ես խոստացել եմ, որ ամէն անգամ, երբ ձի է վաճառւում, քեզ մի պարգեւ տամ:

— Սատանան տանէ քո ոսկիները, — պատասխանեց նա հրաժարուելով. — թէ ուզում ես պարգեւ տալ, ինձ մի կտոր կաշի տուր, որ տրեխներս կարկատեմ: — Նա ցոյց տուեց իր պատառոտած տրեխները: